Համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 04.03.2026 թվականի որոշման
Գործում է 31.03.2026 թվականից

«AMIO –Սպառողական վարկերի (առանց գույքի գրավի) վերաֆինանսավորում

Տեղեկատվական ամփոփագիր

1	Պրոդուկտի ընդհանուր նկարագրությունը	
	Սպառողական վարկ առանց գույքային ապահովության	
1.1	Պրոդուկտ	
1.2	Հաճախորդի նպատակային խումբ	Ֆիզիկական անձինք, ովքեր ունեն կանոնավոր եկամուտ և Բանկի պահանջներին բավարարող վարկերի այլ ֆինանսական կազմակերպություններում
1.3	Վարկի ձևակերպման վայր	Բանկի մասնաճյուղեր/Նալբանդյան սպասարկման կենտրոն
2	Պրոդուկտի չափանիշներ	
2.1	Վարկառուի եկամուտների հաստատում	Վարկառուի աշխատանքի փաստի առկայություն կամ առաջնային և/կամ երկրորդային եկամուտներ վերլուծություն
2.2	Ապահովում	Եկամտի ստացման իրավունք և/կամ Քարտային հաշվից բխող դրամական պահանջի իրավունքի գրավ /Սահմանված դեպքերում նաև երաշխավորություն/
2.3	Վարկի տեսակը	Սպառողական վարկ
2.4	Արժույթ	ՀՀ դրամ
2.5	Տարեկան անվանական տոկոսադրույք (կախված գործատու կազմակերպության ոլորտից և բանկում աշխատավարձ ստանալու փաստից) [1]	13.5%- 18.0%
2.6	Դրույքի ֆիքսում	Հաստատուն վարկի ողջ ժամկետի համար
2.7	Տարեկան փաստացի տոկոսադրույք	14.4%-19.8%
2.8	Վարկի ժամկետ	60 ամիս
2.9	Տոկոսագումարների հաշվարկման կարգ	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով
2.10	Մարման եղանակ	Վարկի գումարի և հաշվեգրված տոկոսների ամենամսյա հավասարաչափ մարում/անուիտետ/
2.11	Նվազագույն և առավելագույն գումար	100,000 - 15,000,000[2] ՀՀ դրամ

[1] Հաճախորդի կողմից 3 ամիս անընդմեջ Բանկի հաշիվներով աշխատավարձ չստանալու դեպքում, վարկի տոկոսադրույքը կարող է բարձրանալ՝ ստացված (աշխատավարձ ստանալու պայմանով) զեղչի չափով:

[2] Մեկ հաճախորդի մասով AMIO Բանկ ՓԲԸ ունեցած առանց գրավի վարկերի առավելագույն սահմանաչափը չպետք է գերազանցի 15 մլն ՀՀ դրամը:

2.12	Վարկը տրամադրելու եղանակը	Վարկը տրամադրվում է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ–ում հաճախորդի կողմից բացված բանկային/քարտային հաշվին անկանխիկ փոխանցման միջոցով Այլ Բանկերում վարկերի մարում կատարվելու է վարկային կոդի միջոցով՝ փոխանցում կատարելով
2.13	Վաղաժամկետ մարում	Սահմանափակումներ չկան
2.14	Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	Մինչև 1 աշխատանքային օր
2.15	Վարկի տրամադրման մասին դրական որոշման գործողության առավելագույն ժամկետ	Վարկի տրամադրման դրական որոշման կայացման օրվանից 15 օրացույցային օր
2.16	Վարկի տրամադրման ժամկետ	Վարկային պայմանագրերը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում
3	**Բանկի միջնորդավճարներ**	
3.1	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար	-
3.2	Հայտի ուսումնասիրության վճար	-
3.3	Միանվագ միջնորդավճար	Սահմանված չէ *(կախված հաճախորդի նախընտրած վերաֆինանսավորման տեսակից կարող է սահմանվել վարկի սկզբնական գումարից 0.4% տրամադրման միանվագ վճար)*
3.5	Վարկային միջոցների կանխիկացում	Համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագների՝ տվյալ տեսակի հաշվի կամ քարտի համար սահմանված սակագներով
3.6	Ընթացիկ հաշիվների բացում / սպասարկում	Համաձայն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների սպասարկման սակագների
3.7	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	Համաձայն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների սպասարկման սակագների
3.8	Վարկի պայմանների վերանայում, վճարման օրվա փոփոխություն, մասնակիցների փոփոխություն, և այլն)	Վարկի մնացորդի 0.2%, նվազագույնը՝ 5000 ՀՀ դրամ
3.9	Վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու դեպքում տույժեր	**Բանկն իրավունք ունի՝** • **Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:** • **Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց վարկի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:** • **Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝** **1) Տույժ/տուգանքներ** **2) Տոկոսագումարներ** **3) Մայր գումար**
		ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

4	**Վարկառուի/ երաշխավորի[3] (առկայության դեպքում) նկատմամբ հիմնական պահանջներ**	
4.1	Վարկառուի/երաշխավորի Կարգավիճակ	ՀՀ-ում ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր ունեն անձը հաստատող փաստաթղթում նշված մշտական գրանցման և/կամ փաստացի բնակության հասցե[4]
4.2	Վարկառուի/երաշխավորի տարիք	Վարկային հայտի ներկայացման պահին հաճախորդի տարիքը պետք է լինի առնվազն 21 տարեկան, իսկ վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 65 տարեկանը[5]:
4.3	Աշխատանքային ստաժ	Վարկառուն վերջին աշխատավայրում առնվազն 3/երեք/ ամիս պետք է հանդիսանա կազմակերպության աշխատակից /եթե եկամուտը աշխատավարձ է/
4.4	Վարկառուի/երաշխավորի վարկային պատմության հանդեպ պահանջներ	Համաձայն Բանկի կողմից սահմանված պահանջների
4.5	Երաշխավորի առկայության դեպքում երաշխավորի նկատմամբ պահանջ	Գործող եկամուտ ունեցող ֆիզիկական անձ, ով պարտավորվում է պատասխանատվություն կրել վարկառուի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար և որի պարտավորությունը ծագում է այն դեպքում, երբ վարկառուն չի կատարում կամ մասնակի է կատարում իր պարտավորությունը:
5	**Վարկառուի Վճարունակությանը ներկայացվող պահանջներ**	
5.1	Վճարունակության գնահատական	Համաձայն Բանկի կողմից սահմանված պահանջների
6	**Լրացուցիչ պայմաններ**	
6.1	Վարկային հայտի մերժման պատճառներ	● Հաճախորդի կողմից չեն ներկայացվել Վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ● Հաճախորդը չի բավարարում Բանկի պայմաններին/պահանջներին ● Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ ● ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստր և/կամ ԱՔՌԱ վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որը Հաճախորդը ունի բացասական վարկային պատմություն: ● Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել Հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը կամ Վարկի վերադարձելիությունը:
6.2	**Անհրաժեշտ փաստաթղթեր**	Կախված հաճախորդի նախընտրած վերաֆինանսավորման տեսակից (աշխատավարձի առկայության փաստի հիմքով կամ եկամտի վերլուծությամբ) վարկավորման շրջանակում կարող են պահանջվել փաստաթղթեր՝ համաձայն Հավելվածի :

[3] Կախված հաճախորդի նախընտրած վերաֆինանսավորման տեսակից (աշխատավարձի առկայության փաստի հիմքով կամ եկամտի վերլուծությամբ) վարկավորում կարող է իրականացվել նաև երաշխավորի առկայությամբ:

[4] Ոչ ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում գրանցում չունեցող ՀՀ քաղաքացու համար՝ անձը հաստատող փաստաթղթում փաստացի բնակության մասին նշումի բացակայության դեպքում անհրաժեշտ է հաշվառման կամ փաստացի բնակության հասցեի նշումով ոչ պակաս, քան 183 օր վաղեմության ժամկետով կացության քարտի կամ ՀՀ Ոստիկանությունից գրանցման մասին տեղեկանքի առկայություն: Վերջիններիս բացակայության դեպքում անհրաժեշտ է աշխատանքային պայմանագրի առկայությունը, որի գործողության ժամկետը գերազանցում է պահանջվող վարկի վերջնաժամկետը, ընդ որում աշխատանքի վերջին վայրում անդադար ստաժը պետք է լինի առնվազն 4 ամիս:
Ուժային կառույցների աշխատակիցների համար փաստացի բնակության պահանջին բավարարող փաստաթուղթ է հանդիսանում հետևյալ փաստաթղթերից մեկը.
1)ՀՀ-ում զորամասի կողմից տրամադրված կոնկրետ հասցեում կամ զորամասի տարածքում բնակության իսկության վերաբերյալ տեղեկանքը՝ բնակության
ժամանակահատվածի նշումով, կամ
2)եկամուտների մասին տեղեկանքը՝ ՀՀ-ում ծառայության սկզբի ամսաթվի նշումով, կամ
3)զինվորական գրքույկը զինվորական հաշվառման կանգնելու ամսաթվի նշումով և պայմանով, որ զինվորական մասը գտնվում է ՀՀ տարածքում:
Վերջինների բացակայության դեպքում ուժային կառույցների աշխատակիցների համար հիմք է հանդիսանում վերջին տարում ոչ պակաս, քան 183 օր ՀՀ տարածքում գտնվելու փաստը (հաստատման համար կցվում են վիզաների նշումների առկայությամբ անձնագրի համապատասխան էջերի սքան-պատճենները)

5 Բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում հնարավոր է վարկավորում սկսած 18 տարեկանից:

Տեղեկատվություն երաշխավորների համար.

- Եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից:
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:
- Հաղորդակցումը իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով:
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին:
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ:
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

Երաշխավորն իրավունք ունի.

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Զգուշացում՝

Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք չկատարեք կամ ոչ պատշաճ կատարեք վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ուշադրություն՝

ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵԶ ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (առկայության դեպքում) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ. ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

Ուշադրություն՝

ԿՐԵԴԻՏԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՉԻԿԱՐՈՂ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ՀՀԿ ԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍԱՀՄԱՆԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ:

Ուշադրություն՝

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:
ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է՝ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԸ.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)
A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)
n – կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը
Kn-կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը
Dn-կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով
i –ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ՝

- **Կրեդիտի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ**
- **Ժամկետ՝ 24 ամիս**
- **Տարեկան տոկոսադրույք՝ 16%**
- **Մարման տեսակ՝ անուիտետային**

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է՝ 17,1%

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վաևկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Ուշադրություն՝

ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Ուշադրություն՝

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

Ուշադրություն՝

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Վարկային պատմության
և սքոր գնահատականի վերաբերյալ տեղեկատվություն

Վարկային պատմության էությունը

Վարկային պատմությունը հաճախորդի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջությունն է, որը ցույց է տալիս վերջինիս ֆինանսական պարտավորությունների կամ դրանց կատարման պատմությունը:

Վարկային պատմության մեջ ներառվում են հարցման պահին նախորդող 5 տարիների վերաբերյալ տվյալները, և այն ցույց է տալիս՝

• հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների չափի, տարեկան տոկոսադրույքի, պարտավորությունների մնացորդի, դրանց դիմաց գրավադրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:
• հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների գծով վճարների պատմությունը, ներառյալ սահմանված ժամանակացույցից վճարումների ուշացումները
• այլ անձանց տրված երաշխավորությունները
• հաճախորդին փոխկապակցված անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Վարկային պատմությունը չի պարունակում անձնական բնույթի տվյալներ:

Վարկային սքոր գնահատականի էությունը

Վարկային սքորը հաճախորդի սպասարկած պարտավորությունների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված գնահատական է, որը ցույց է տալիս տվյալ հաճախորդի կողմից վարկի վերադարձելիության ռիսկն առաջիկա որոշակի ժամանակահատվածում:

Վարկային հարցման ազդեցությունը սքոր գնահատականի վրա

Կախված վարկային հարցման տեսակից՝ այն կարող է ազդել ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից կիրառվող սքորի տեսակների՝ ԱՔՌԱ սքոր և ՖԱՅԿՈ սքոր, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող սեփական սքոր գնահատականների վրա: Հարցումների նպատակների և վարկային սքոր գնահատականի վրա դրանց ազդեցության վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև աղյուսակում.

Վարկային հարցման նպատակ	**Վարկային հարցման ենթանպատակ**	**Ազդեցությունը վարկային սքորի վրա**
Նոր վարկային դիմում		Նվազեցնում է
Երաշխավոր անձ	Նոր վարկային դիմում	Նվազեցնում է
Փոխկապակցված անձ		Չի ազդում
Գործող վարկի մոնիտորինգ		Չի ազդում
Երաշխավոր անձ	- Գործող վարկ - Գործող երաշխավորի մոնիտորինգ	Չի ազդում
Այլ Բանկային ծառայություններ		Չի ազդում

Վարկային պատմության և սքոր գնահատականի կարևորությունը

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը կարևոր են, քանի որ վարկի համար դիմելուց, բանկը կամ վարկային կազմակերպությունը, մինչև վարկ տրամադրելու որոշում կայացնելը, ուսումնասիրում է դիմումատուի վարկային պատմությունն ու գնահատում, թե որքանով է պատասխանատու վերջինս՝ որպես վարկառու:

Ձևավորված ‘Վատ վարկային պատմությունը’ կարող է հանդիսանալ ֆինանսավորման տրամադրման մերժման պատճառ:

Սխալ կամ թերի տվյալների շտկում

Եթե հաճախորդի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով հաճախորդը կարող է այդ մասին տեղեկացնել «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ՛ ՓԲԸ-ին, այսուհետ՝ Վարկային բյուրո, կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններին: Վարկային բյուրոյին տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում 'Իմ ԱՔՌԱ' անձնական գրասենյակից:

Վարկային բյուրոյի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է 'ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ՛ ՓԲԸ 'Վեճերի լուծման ընթացակարգ՛-ով:

Վարկային պատմության և սքոր գնահատականի բարելավման քայլեր

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը բարելավելու համար անհրաժեշտ է նախ շտկել դրանք վատթարացնող հիմնական պատճառները, մասնավորապես՝ հարկավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում արագ մարել գործող ժամկետանց պարտավորությունները, ինչպես նաև՝

- մարումները կատարել սահմանված գրաֆիկին համապատասխան՝ բացառելով ուշացումները և ցուցաբերելով ճշտապահ վարքագիծ,
- նվազեցնել տրված երաշխավորությունները՝ կրճատելով դրանց քանակը, գումարը, ինչպես նաև առկայության դեպքում ապահովելով այս մասով ժամկետանց պարտավորությունների լրիվ մարումը,
- խուսափել անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց,
- թեթևացնել վարկային բեռը՝ մարելով գործող վարկերը՝ մասամբ կամ ամբողջությամբ,
- խուսափել հաճախակի նոր վարկերի ստացման համար դիմելուց:

Մանրամասները՝ abcfinance.am և acra.am հղումներում:

Ֆինանսական տեղեկատու՝ www.fininfo.am

Ուշադրություն՝

«ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՌ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկի վերաբերյալ տվյալներ.
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.amiobank.am, Էլ. Փոստ՝ info@amiobank.am

Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: